ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 մայիսի 2016թ. թիվ 159-Ա

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՄԱՆԿԱԿԱՆ ՄԱՀԱՑՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 21-Ի ԹԻՎ 108-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետով, հիմք ընդունելով ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. մայիսի 5-ի «Մանկական մահացության դեպքերի վերլուծության և այդ նպատակով հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 710-Ա հրամանը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Լոռու մարզում մանկական մահացության դեպքերն ընտրողաբար ուսումնասիրելու, մասնագիտական և կազմակերպչական թերությունները վերհանելու և դրանից բխող գործելակերպի բարելավմանն ուղղված միջոցառումներ մշակելու նպատակով ստեղծել Լոռու մարզի մանկական մահացության դեպքերի վերլուծության մշտական հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին՝

1) Յուրաքանչյուր ամսվա 2-րդ տասնօրյակում քննարկել նախորդ ամսվա ընթացքում առողջապահական ընկերություններից երեխաների մահացության դեպքերի վերաբերյալ հավաքագրված տվյալները:

2) Ընտրողաբար իրականացնել մահվան առանձին դեպքերին առնչվող բժշկական փաստաթղթերի ուսումնասիրություն և մասնագիտական վերլուծություն:

3) Մահվան դեպքերի վերլուծության արդյունքում հայտնաբերված բժշկական սխալների վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը 10-օրյա ժամկետում ներկայացնել ՀՀ առողջապահության նախարարության Բժշկական սխալների և բժշկական գործողությունների վերաբերյալ ստացված բողոքները քննարկող մշտական գործող հանձնաժողովին:

4) Մահվան առանձին դեպքերի վերլուծության ընթացքում, ըստ անհրաժեշտության, հանձնաժողովում ներգրավել նաև տվյալ ոլորտի առաջատար այլ մասնագետներ:

5) Առանձին դեպքերում մանկական մահացության դեպքերը քննարկել տեղերում՝ ներգրավելով բուժհաստատության անձնակազմին:

3. Բժշկական կազմակերպությունների տնօրեններին՝

1) Ապահովել յուրաքանչյուր ամսվա առաջին 5-օրյակում նախորդ ամսվա ընթացքում արձանագրված 0-18 տարեկան երեխաների տնային և հիվանդանոցային մահացության բոլոր դեպքերի վերաբերյալ անհատական տվյալների տրամադրումը ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն՝ ըստ երեխայի մահվան դեպքի հաղորդման սահմանված քարտի ձևանմուշի, ՀՀ առողջապահության նախարարության աշխատակազմի բժշկական օգնության կազմակերպման վարչության մոր և մանկան առողջության պահպանման բաժին տրամադրելու համար:

2) Բուժհաստատությունում արձանագրված յուրաքանչյուր դեպք վերլուծել տեղում և քննարկել բուժանձնակազմի հետ՝ ներգրավելով մարզի գլխավոր մանկաբույժին և տարածաշրջանային պատասխանատու մանկաբույժներին: Յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող 5 օրերի ընթացքում մահվան դեպքերի քննարկման արդյունքները համապատասխան եզրահանգմամբ և ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ տեղեկատվությամբ ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Ս.Լամբարյանի վրա:

5. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2010 թվականի մայիսի 21-ի «Մանկական մահացության դեպքերի վերլուծության մշտական հանձնաժողով ստեղծելու մասին» թիվ 108-Ա որոշումը:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մայիսի 27
ք.Վանաձոր